

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
11.03.2024 թ.

ՀԱՇՆՎՈՒԹՅՈՒՆ

«ՂԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ»

հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

| | | |
|--|---|---------|
| 1. Հասարակական կազմակերպության՝ | | |
| 1.1 Լրիվ անվանումը | «ՂԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ» | |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 00062828 | |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹՎԱՄԱՍ ԿԻԵՎՅԱՆ Փ. 32 ԲՆ.26 | |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.991394 | |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 1999-12-17 | |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +37455270896 | |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | lusinyanmarina@yahoo.com | |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| ԻՐԻՆԱ | ՂԱԶԱՐՅԱՆ | Նախագահ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Հասարակական կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենքով սահմանված կարգով, հիմնվելով ապացույցների վրա և իրականացնելով հետազոտական, վերլուծական, կրթական, ուսումնական և այլ գործունեություններ, այդ թվում՝ քաղաքականությանը և օրենսդրությանը վերաբերվող առաջարկությունների մշակում և շահերի պաշտպանություն, նպաստել մարդկանց առողջության պահպանմանը և բարելավմանը: | | |
| Դա ընդգրկում է, մասնավորապես, աջակցություն ղեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների առաջադրված գործունեությանը՝ որպես ղեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների առաջադրված գործունեությանը՝ որպես ղեղերի օգտագործման բարելավման կարևոր միջոց: | | |
| Հասարակական կազմակերպության գործունեության հիմնական նպատակները և խնդիրներն են. Օրենքով սահմանված կարգով՝ Առողջության և ղեղագործական քաղաքականության վերաբերյալ մշակել առաջարկություններ՝ հիմնվելով փաստերի ու ապացույցների, այդ թվում՝ սեփական հետազոտությունների արդյունքների վրա, | | |
| Ղեղագործության, առողջապահության տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և հարակից այլ ոլորտներում իրականացնել գիտական հետազոտություններ, վերլուծություններ, ուսումնասիրություններ, այդ թվում՝ հանրային առողջության, առողջապահության և ղեղագործության կառավարման, մանկաբուժության, մանկաբարձության ղեղերի օգտագործման, ղեղահամաձայնակարգի պահպանության, ղեղատնտեսագիտության, բնապահպանության և հիգիենայի բնագավառում, | | |
| Առողջապահության, ղեղագործության տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և այլ ոլորտներում իրականացնել ուսումնական, կրթական և մեթոդական գործունեություն, այդ թվում՝ կրթական ծրագրերի մշակում, Առողջապահության, ղեղագործության տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և այլ ոլորտներում իրականացնել հրատարակչական գործունեություն, | | |
| Իրականացնել շահերի պաշտպանության միտված գործունեություն, Իրականացնել հանրային իրազեկմանը միտված գործունեություն, իրականացնել քարոզարշավներ՝ մարդկանց առողջության պահպանմանը և բարելավմանն ուղղված հարցերի վերաբերյալ, | | |
| Իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ ղեղերի մատչելիության ապահովմանը, ուղղված գործունեություն, Իրականացնել պացիենտների անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ ղեղերի անվտանգ օգտագործմանը ուղղված գործունեություն, | | |
| Իրականացնել ղեղագործական հոգածության զարգացմանը միտված գործունեություն, Մշակել առաջարկություններ ՀՀ առողջապահության և ղեղագործության, ինչպես նաև այլ ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի վերաբերյալ հիմնվելով ապացույցների, այդ թվում՝ սեփական ուսումնասիրությունների արդյունքների վրա, | | |
| Կազմակերպել և անցկացնել գիտական, գիտագործական և գործնական համաժողովներ, սեմինարներ, կոնգրեսներ և այլ միջոցառումներ, Իրականացնել երեխաների առողջության պահպանմանը և բարելավմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ մշակել առաջարկություններ քաղաքականության ու օրենսդրության ոլորտում, իրականացնել հետազոտություններ, ուսուցումներ և այլն, | | |
| Առողջապահության, ղեղագործության և այլ հարցերի վերաբերյալ իրականացնել լուսավորչական աշխատանք բնակչության, այդ թվում՝ երեխաների շրջանում, Առողջապահության, ղեղագործության և այլ հարցերի վերաբերյալ իրականացնել հանրության իրազեկմանը, | | |
| Իրականացնել ծխելու դեմ պայքարին, ինչպես նաև առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված գործունեություն (ուսումնասիրություններ, քաղաքականության և օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակում և այլն), Իրականացնել ղեղերի մատչելիության աճին նպաստող գործունեություն (ուսումնասիրություններ, ղեղագործական քաղաքականության ոլորտում առաջարկությունների մշակում և այլն), | | |
| Իրականացնել ղեղերի պատասխանատու (ռազմիսայ) օգտագործմանը նպաստող գործունեություն, Իրականացնել հավամանրեային ղեղերի պատասխանատու օգտագործմանը նպաստող գործունեություն, այդ թվում՝ առողջապահական կազմակերպություններում հավամանրեային ղեղերի օգտագործման արդյունավետ կառավարման վերաբերյալ առաջարկությունների մշակում, | | |

| | | | | | |
|--|------------------------|-----------|-------------------------|-----------------|---------------------------|
| Իրականացնել ամոզիչ (պալիատիվ) հոգածության ուղղված գործունեություն, այդ թվում՝ տվյալ ոլորտում օգտագործվող դեղերի մատչելիությանը նպաստող, Իրականացնել առողջապահական համակարգում և դեղագործական ոլորտում կառավարման արդյունավետության բարելավմանն ուղղված գործունեություն, | | | | | |
| Իրականացնել ՁԻԱՀ-ի, թոքադալի և մալարիայի հետ կապված տարբեր խնդիրների (կանխարգելում, բուժում, ուսուցում, հետազոտություններ և այլն) լուծմանն ուղղված գործունեություն, | | | | | |
| Իրականացնել առողջապահության և դոդագործության ոլորտում պատշաճ կառավարմանը և ղեկավարմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ թափանցիկության, պատասխանատվության և հաշվետվողականության ընդլայնմանը նպաստող, Նպաստել հղիների առողջության հետ կապված հարցերի բացահայտմանը, հետազոտմանը և լուծմանը, | | | | | |
| Իրականացնել կանանց և երեխաների կարիքներին ու իրավունքներին շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն, Իրականացնել սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեություն, Աջակցել բնապահպանական խնդիրների լուծմանը, | | | | | |
| Նպաստել դեղերի օգտագործման, դոդատնտեսագիտության և դեղահամաճարակաբանության ուսումնասիրմամբ շահագրգռված տարբեր մասնագիտությունների տեր անձանց համագործակցության խթանմանը, Նպաստել դեղերի օգտագործման բնագավառում գիտահետազոտական աշխատանքներում համագործակցությանը, | | | | | |
| Նպաստել ուսումնական ծրագրերում դեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների արդյունքների ներդրմանը, Աջակցել դեղերի օգտագործման ոլորտում միջազգային և ազգային գիտական հետազոտություններում ստանդարտ մեթոդաբանությունների ընդունմանը, | | | | | |
| Հանդիսանալ Հայաստանում դեղերի օգտագործման բնագավառում ուսումնասիրություններ իրականացնող գիտնականների հաղորդակցման միջավայր, կապող օղակ, Աջակցել ATC և DDD հետ կապված դեղերի ռեգիստրի մշակմանը և վերլուծությանը, | | | | | |
| Գործունեություն ծավալել դեղերի օգտագործման, դեղահամաճարակաբանության, դեղատնտեսագիտության և դեղագործության այլ բնագավառներում՝ կիրառելով միջազգային և ազգային գիտական ուսումնասիրությունների արդյունքները, Հավաքագրել դեղագործական, բժշկական և այլ կազմակերպություններից ՀՀ-ում դեղերի սպառման և օգտագործման վերաբերյալ տվյալներ, մշակել դրանք, պահպանել և տարածել, | | | | | |
| Դեղերի օգտագործման բնագավառում հանրապետության գիտական ուսումնասիրությունների ոլորտում գործել որպես տեղեկատվական կենտրոն՝ աստարելով դեղերի օգտագործման բնագավառում գիտական ուսումնասիրությունների աղբյուրների ցանկի, հիվանդության և մահացածության դեպքերի մասին տվյալների պահպանմանը, ՀՀ-ում և այլ երկրներում կատարված հրապարակումների ցանկի պահպանմանը, գիտական հետազոտությունների նախնին և ընթացիկ ծրագրերի համարակալած ցանկի պահպանմանը, | | | | | |
| Համագործակցել ազգային և միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը, Միջազգային գիտական ընկերությունները, դեղերի կարգավորման գործակալությունները, համալսարանները, հասարակական կազմակերպությունները, | | | | | |
| Ինչպես նաև Հայաստանի առողջապահության նախարարությանը, Առողջապահության ազգային ինստիտուտը, Երևանի պետական բժշկական համալսարանը և դեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտություններ իրականացնող մասնագիտացված այլ կազմակերպությունները, դեղագործական այլ կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները և զանգվածային լրատվական միջոցները, | | | | | |
| Գործել որպես EURO-DURG-ի հետ կապող օղակ, Անդամակցել միջազգային նմանատեպ կազմակերպությունների՝ համաձայն ՀՀ օրենսդրության, Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն: | | | | | |
| 4 Հասարակական կազմակերպության՝ | | | | | |
| 4.1 Անդամների թիվը | | | | | 3 |
| 4.2 Կամավորների թիվը | | | | | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | | | | 1 |
| 6. Իրականացված ծրագրեր՝ | | | | | |
| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը | |
| 1 | | | | | |
| 7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝ | | | | | |
| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
| 1 | | | | | |
| 8. Տարեկան մուտքեր՝ | | | | | |
| 8.1 Դրամական միջոցները | | | | | |
| 8.2 Գույքը | | | | | |
| Ընդամենը | | | | | 0 |
| 9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ | | | | | |
| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | | 9.3 Ստացման աղբյուրները | | |
| 1 | | | | | |
| Հ/Հ | 9.2 Գույքը | | | | |
| 1 | | | | | |
| Ընդամենը | | | | | 0 |
| 10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝ | | | | | |
| 10.1 Դրամական միջոցները | | | | | |
| 10.2 Գույքը | | | | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | | 10.2.2 Արժեքը | | |
| 1 | | | | | |
| Ընդամենը | | | | | 0 |
| 11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝ | | | | | |
| 11.1 Դրամական միջոցները | | | | | |
| 11.2 Գույքը | | | | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | | 11.2.2 Արժեքը | | |
| 1 | | | | | |
| Ընդամենը | | | | | 0 |

| 12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝ | | | |
|--|-------------|-----------------------|----------------------------|
| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |
| Եզրաներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Առդիտորի եզրակացություն՝ _____ 0 _____ էջից
 էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
 ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրություն, անունը, ազգանուն

Կազմված է «3» հուլիսի 2018թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՂԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
17 12 1999 թ. ԹԻՎ 2077 ՀՐԱՄԱՆՈՎ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

«3» հուլիսի 2018թ.

00062828


ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳՐԱՆՑՎԱԾ Է



Իրինա Ղազարյան
(ստորագրություն)

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«24» 08 2018 թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.991394

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՂԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրությամբ)



I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Դեղերի օգտագործման գիտական խումբ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական, հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:
- 1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:
- 1.4. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ «Դեղերի օգտագործման գիտական խումբ» հասարակական կազմակերպություն

կարճ անվանում՝ «Դեղերի օգտագործման գիտական խումբ» ՀԿ

ռուսերեն՝ Общественная организация “Научная группа по использованию лекарств”

կարճ անվանում՝ ОО “Научная группа по использованию лекарств”

անգլերեն՝ “Drug Utilization Research Group” non-governmental organization

կարճ անվանում՝ “Drug Utilization Research Group” NGO

- 1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Կիևյան փ., շ. 32, բն.26:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հասարակական կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենքով սահմանված կարգով.

հիմնվելով ապացույցների վրա և իրականացնելով հետազոտական, վերլուծական, կրթական, ուսումնական և այլ գործողություններ, այդ թվում քաղաքականությանը և օրենսդրությանը վերաբերվող առաջարկությունների մշակում և շահերի պաշտպանություն, նպաստել մարդկանց առողջության պահպանմանը և բարելավմանը: Դա ընդգրկում է, մասնավորապես, աջակցություն դեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների առաջխաղացմանը՝ որպես դեղերի օգտագործման բարելավման կարևոր միջոցի:

Հասարակական կազմակերպության գործունեության հիմնական նպատակները և խնդիրներին են. օրենքով սահմանված կարգով՝

- առողջապահության և դեղագործական քաղաքականության վերաբերյալ մշակել առաջարկություններ՝ հիմնվելով փաստերի ու ապացույցների, այդ թվում՝ սեփական հետազոտությունների արդյունքների վրա,
- դեղագործության, առողջապահության, տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և հարակից այլ ոլորտներում իրականացնել գիտական հետազոտություններ, վերլուծություններ, ուսումնասիրություններ, այդ թվում՝ հանրային առողջության, առողջապահության և դեղագործության կառավարման, մանկաբուժության, մանկաբարձության, դեղերի օգտագործման, դեղահամաճարակաբանության, դեղատնտեսագիտության, բնապահպանության և հիգիենայի բնագավառներում,
- առողջապահության, դեղագործության, տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և այլ ոլորտներում իրականացնել ուսումնական, կրթական և մեթոդական գործունեություն, այդ թվում կրթական ծրագրերի մշակում,
- առողջապահության, դեղագործության, տնտեսագիտության, հանրային քաղաքականության, սոցիալական և այլ ոլորտներում իրականացնել հրատարակչական գործունեություն,
- իրականացնել շահերի պաշտպանությանը միտված գործունեություն,
- իրականացնել հանրային իրազեկմանը միտված գործունեություն,
- իրականացնել քարոզարշավներ՝ մարդկանց առողջության պահպանմանը և բարելավմանն ուղղված հարցերի վերաբերյալ,
- իրականացնել մարդու իրավունքների պաշտպանությանն, այդ թվում՝ դեղերի մատչելիության ապահովմանը, ուղղված գործունեություն,
- իրականացնել պացիենտների անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ դեղերի անվտանգ օգտագործմանը միտված գործունեություն,
- իրականացնել դեղագործական հոգածության զարգացմանը միտված գործունեություն,
- մշակել առաջարկություններ ՀՀ առողջապահության և դեղագործության, ինչպես նաև այլ ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի վերաբերյալ՝ հիմնվելով ապացույցների, այդ թվում՝ սեփական ուսումնասիրությունների արդյունքների վրա,
- կազմակերպել և անցկացնել գիտական, գիտագործնական և գործնական համաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ,
- իրականացնել երեխաների առողջության պահպանմանը և բարելավմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ մշակել առաջարկություններ քաղաքականության ու օրենսդրության ոլորտում, իրականացնել հետազոտություններ, ուսուցումներ և այլն,
- առողջապահության, դեղագործության և այլ հարցերի վերաբերյալ իրականացնել լուսավորչական աշխատանք բնակչության, այդ թվում՝ երեխաների շրջանում,
- առողջապահության, դեղագործության և այլ հարցերի վերաբերյալ իրականացնել հանրության իրազեկումը,
- իրականացնել ծխելու դեմ պայքարին, ինչպես նաև առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված գործունեություն (ուսումնասիրություններ, քաղաքականության և օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակում և այլն),
- իրականացնել դեղերի մատչելիության աճին նպաստող գործունեություն (ուսումնասիրություններ, դեղագործական քաղաքականության ոլորտում առաջարկությունների մշակում, շահերի պաշտպանում և այլն),
- իրականացնել դեղերի պատասխանատու (ռացիոնալ) օգտագործմանը նպաստող գործունեություն,
- իրականացնել հակամանրէային դեղերի պատասխանատու օգտագործմանը նպաստող գործունեություն, այդ թվում առողջապահական կազմակերպություններում հակամանրէային դեղերի օգտագործման արդյունավետ կառավարման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- իրականացնել ամոգիչ (պալիատիվ) հոգածության բարելավմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ տվյալ ոլորտում օգտագործվող դեղերի մատչելիությանը նպաստող,

- իրականացնել առողջապահական համակարգում և դեղագործական ոլորտում կառավարման արդյունավետության բարելավմանն ուղղված գործունեություն,
- իրականացնել ՁԻԱՀ-ի, թոքախտի և մալարիայի հետ կապված տարբեր խնդիրների (կանխարգելում, բուժում, ուսուցում, հետազոտություններ և այլն) լուծմանն ուղղված գործունեություն,
- իրականացնել առողջապահության և դեղագործության ոլորտում պատշաճ կառավարմանը և դեկավարմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ թափանցիկության, պատասխանատվության և հաշվետվողականության ընդլայնմանը նպաստող,
- նպաստել հղիների առողջության հետ կապված հարցերի բացահայտմանը, հետազոտմանը և լուծմանը,
- իրականացնել կանանց և երեխաների կարիքներին ու իրավունքների շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն,
- իրականացնել սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեություն,
- աջակցել բնապահպանական խնդիրների լուծմանը,
- նպաստել դեղերի օգտագործման, դեղատնտեսագիտության և դեղահամաճարակաբանության ուսումնասիրմամբ շահագրգռված տարբեր մասնագիտությունների տեր անձանց համագործակցության խթանմանը,
- նպաստել դեղերի օգտագործման բնագավառում գիտահետազոտական աշխատանքներում համագործակցությանը,
- նպաստել ուսումնական ծրագրերում դեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների արդյունքների ներդրմանը,
- աջակցել դեղերի օգտագործման ոլորտում միջազգային և ազգային գիտական հետազոտություններում ստանդարտ մեթոդաբանությունների ընդունմանը,
- հանդիսանալ Հայաստանում դեղերի օգտագործման բնագավառում ուսումնասիրություններ իրականացնող գիտնականների հաղորդակցման միջավայր, կապող օղակ,
- աջակցել ATC և DDD հետ կապված դեղերի ռեգիստրի մշակմանը և վերլուծությանը,
- գործունեություն ծավալել դեղերի օգտագործման, դեղահամաճարակաբանության, դեղատրնտեսագիտության և դեղագործության այլ բնագավառներում՝ կիրառելով միջազգային և ազգային գիտական ուսումնասիրությունների արդյունքները,
- հավաքագրել դեղագործական, բժշկական և այլ կազմակերպություններից ՀՀ-ում դեղերի սպառման և օգտագործման վերաբերյալ տվյալներ, մշակել դրանք, պահպանել և տարածել,
- դեղերի օգտագործման բնագավառում հանրապետության գիտական ուսումնասիրությունների ոլորտում գործել որպես տեղեկատվական կենտրոն՝ սատարելով դեղերի օգտագործման բնագավառում գիտական ուսումնասիրությունների աղբյուրների ցանկի, հիվանդության և մահացածության դեպքերի մասին տվյալների պահպանմանը, ՀՀ-ում և այլ երկրներում կատարված հրապարակումների ցանկի պահպանմանը, գիտական հետազոտությունների նախկին և ընթացիկ ծրագրերի համարակալած ցանկի պահպանմանը,
- համագործակցել ազգային և միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը, Միջազգային գիտական ընկերությունները, դեղերի կարգավորման գործակալությունները, համալսարանները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև Հայաստանի առողջապահության նախարարությունը, Առողջապահության ազգային ինստիտուտը, Երևանի պետական բժշկական համալսարանը և դեղերի օգտագործման բնագավառում գիտական հետազոտություններ իրականացնող մասնագիտացված այլ կազմակերպությունները, դեղագործական այլ կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները և զանգվածային լրատվական միջոցները,
- գործել որպես EURO-DURG-ի հետ կապող օղակ,
- անդամակցել միջազգային նմանատիպ կազմակերպություններին՝ համաձայն ՀՀ օրենսդրության,
- իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման և դադարում է լուծարման ավարտի պահից: Կազմակերպությունը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից:
- 3.2. Կազմակերպությունն ունի ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականությունները:
- 3.3. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
 - 1) իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
 - 2) որպես սեփականություն ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու լինել այդ գույքով,
 - 3) բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
 - 4) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները,
 - 5) ներգրավել կամավորների՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով,
 - 6) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
 - 7) հիմնադրել լրատվության միջոցներ,
 - 8) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
 - 9) ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները,
 - 10) ինքնուրույն ընտրել իր արտաքին գործունեության վարման կարգը,
 - 11) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություններ կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
 - 12) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,
 - 13) ստեղծել կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին,
 - 14) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերել գույք, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտները,
 - 15) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,
 - 16) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ գործունեություն:
- 3.4. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

- 3.5. Կազմակերպությունն ունի իր խորհրդանիշը:
- 3.6. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 3.7. Կազմակերպությունն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքների պաշտպանության իրավունք:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

- 1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.
- 2) «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.
- 3) պաշտոնական կայքի առկայության դեպքում՝ դրա հասցեի վերաբերյալ ծանուցել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.
- 4) «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.
- 5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թողային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.
- 6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.
- 7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
- 8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

4.2. Կազմակերպությունն իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների կամ անդամության թեկնածուների պարտավորությունների համար, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Օրենքով սահմանված կարգով կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի և իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, ընդունում է Կազմակերպության

կանոնադրությունը և համապատասխանում է Կազմակերպության կողմից սահմանված պահանջներին:

- 5.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ) կամ վերջինիս կողմից լիազորված հանձնախումբին:
- 5.3. Կազմակերպության անդամ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը կամ վերջինիս կողմից լիազորված հանձնախումբը:
- 5.4. Կազմակերպության անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից:
- 5.5. Կազմակերպության անդամ դառնալու և անդամությունից դուրս գալու, ինչպես նաև հեռանելու կարգը սահմանվում է Խորհրդի որոշմամբ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Կազմակերպության անդամությանը ներկայացվող պահանջները սահմանվում են Կազմակերպության Խորհրդի որոշմամբ:
- 6.2. Անկախ անդամության պահանջներին բավարարելուց, անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր.
 - 1) դատարանի վճռով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
 - 2) դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրանց դատվածությունը մարված կամ հանված չէ,
 - 3) ճանաչվել են սնանկ,
 - 4) գտնվում են լուծարման գործընթացում:
- 6.3. Մինչև տասնչորս տարեկան անձը Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:
- 6.4. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
- 6.5. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ (պատվիրակ) ժողովում ունի մեկ ձայնի իրավունք, ինչը որևէ կերպ չի կարող փոխանցվել այլ անդամի՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պատվիրակներին ձայնի իրավունքի փոխանցման դեպքի:
- 6.6. Կազմակերպության անդամի անդամագրումը կատարվում է դիմողի կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացման հիման վրա՝ սահմանված կարգին համաձայն:
- 6.7. Կազմակերպության անդամն իրավունք ունեն անարգել հրաժարվել անդամությունից՝ իր գրավոր դիմումի հիման վրա: Անդամությունը համարվում է դադարեցված սույն կետով նախատեսված դիմումը ներկայացնելու պահից:
- 6.8. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
 - 1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում, ընդ որում 18 տարին չլրացած անդամները չեն կարող ընտրվել ղեկավար մարմիններում.
 - 2) ներկա լինել Ժողովին կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,

- 3) ներկա լինել Կազմակերպության ժողովին, եթե վերջինս անցկացվում է Կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել,
 - 4) Խորհրդի կողմից սահմանված կարգով անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,
 - 5) Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, կառավարման մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին (առկայության դեպքում),
 - 6) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,
 - 7) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
 - 8) Կազմակերպության կառավարման մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոքարկել ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Կազմակերպության կառավարման մարմինների որոշումները կարող են բողոքարկվել 60 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամը իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Կազմակերպության անդամների կողմից բողոքները ներկայացվում են գրավոր՝ պատվիրված նամակով կամ անձամբ:
- 6.9. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- 1) հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին.
 - 2) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, կառավարման մարմինների որոշումները.
 - 3) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.
 - 4) չբացահայտել Կազմակերպության գաղտնի համարվող տեղեկությունները: Գաղտնի համարվող տեղեկությունների ցանկը սահմանվում է Խորհրդի որոշմամբ:
- 6.10. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատառություն, Կազմակերպության անդամությունից հեռացում:

7. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԿԱՐԳԸ

7.1. Անդամավճար չի սահմանվում:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա անդամների ժողովն է (այսուհետ՝ ժողով): Ժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:
- 8.2. Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ՝ համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով: Ժողովի անցկացման ձևը որոշում է Խորհուրդը:
- 8.3. Կազմակերպության ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի

անցկացման համար քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նույն օրակարգով նոր ժողովի գումարման տարին, ամիսը և օրը:

- 8.4. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին մասնակցում են անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները: Սույն կետով նախատեսված դեպքում ժողովն անց է կացվում Կազմակերպության անդամներից այբբենական հերթականությամբ յուրաքանչյուր հերթական 20 անդամներից ընտրված 4-ական պատվիրակների մասնակցությամբ:
- 8.5. Կազմակերպության հերթական ժողովի օրակարգի, դրա տեղի, օրվա և ժամի մասին անդամներին և անդամության թեկնածուներին ծանուցվում է էլեկտրոնային փոստի միջոցով կամ Կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային կայքէջի միջոցով, սակայն ոչ ուշ, քան ժողովից 15 օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:
- 8.6. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի պահանջով՝ Խորհրդի կողմից պահանջող կողմի հաստատած օրակարգով ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները ծանուցվում են հերթական ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով՝ ժողովի անցկացման օրվանից առնվազն 7 օր առաջ:
- 8.7. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝
 - Կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը (գրավոր ծանուցման դեպքում).
 - նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.
 - նիստի անցկացման ձևը.
 - նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին Կազմակերպության անդամների ծանոթանալու կարգը:
- 8.8. Ժողովի արդյունքում որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 8.9. Համատեղ հավաքի ձևով ժողովի վարման ընթացակարգը ներառում է հետևյալ փուլերը՝
 - հայտարարվում է ժողովի բացման մասին,
 - հաղորդագրություն է տրվում ժողովի քվորումի մասին,
 - հրապարակվում է ժողովի օրակարգը,
 - օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ լսվում են ելույթները և կատարվում է քվեարկություն,
 - հայտարարվում են քվեարկության արդյունքները և ժողովի կողմից ընդունված որոշումները,
 - հայտարարվում է ժողովի փակման մասին:
- 8.10. Ժողովի աշխատանքը ղեկավարում է կազմակերպության Նախագահը: Նախագահի պարտականությունները կատարող անձի բացակայության դեպքում ժողովի նախագահողը և քարտուղարն ընտրվում են ժողովի մասնակիցներից՝ ժողովի մասնակիցների պարզ մեծամասնության կողմից:
- 8.11. Նախագահողը ղեկավարում է ժողովի աշխատանքը, պահպանում է վարման կարգը, համակարգում և վերահսկում է ժողովի քարտուղարի աշխատանքը, ապահովում է քննարկվող հարցերի վերաբերյալ ժողովի մասնակիցների՝ կարծիք հայտնելու իրավունքը:
- 8.12. Ժողովը արձանագրվում է հետևյալ կարգով՝

- 8.12.1. Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն երեք օրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահողի և Ժողովի քարտուղարը:
- 8.12.2. Ժողովի արձանագրության մեջ նշվում են ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, ժողովի նախագահողի և Ժողովի քարտուղարի անունը, ազգանունը, ժողովի օրակարգը:
- 8.12.3. Ժողովի արձանագրությունը պարունակում է քվեարկության դրված հարցերը, ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները:
- 8.12.4. Ժողովի արձանագրությունները պահպանվում են Կազմակերպության գտնվելու վայրում հինգ տարի, այնուհետև դրանք արխիվացվում են:
- 8.13. Կազմակերպության անդամներն իրավունք ունեն ծանոթանալ արձանագրության բնօրինակին, պահանջել Կազմակերպության կնիքով վավերացված արձանագրության պատճենը:
- 8.14. Ժողովի նիստերը հեռակա կարգով գումարումն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով Ժողովի նիստ գումարվում և անցկացվում է հետևյալ կարգով.
- 8.14.1. Ժողովի քարտուղարը Նախագահի անունից Կազմակերպության անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսի միջոցով ուղարկում է Ժողովի օրակարգը, ինչպես նաև քվեաթերթիկները հետևյալ նվազագույն վավերապայմաններով.
- Կազմակերպության անվանումը,
 - Նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, Ժամը,
 - Քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,
 - Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակը՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»:
- 8.14.2. Կազմակերպության անդամները ստանալով ուղարկված փաստաթղթերը՝ քվեաթերթիկների միջոցով քվեարկում են օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ և էլեկտրոնային եղանակով կամ այլ միջոցով այն ուղարկում են Ժողովի քարտուղարին:
- 8.14.3. Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե քվեաթերթիկում թողնվել է քվեարկության մեկ տարբերակ և ուղարկվել քվեաթերթիկում նշված ժամկետում:
- 8.14.4. Ժողովի քվորումն ապահովված լինելու դեպքում (Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելիի կողմից քվեաթերթիկները լրացվելու և քվեաթերթիկում նշված ժամկետում ուղարկվելու դեպքում) ժողովի քարտուղարն ամփոփում է Կազմակերպության անդամներից ստացված քվեաթերթիկները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է Ժողովի հեռակա կարգով անցկացրած նիստի արձանագրություն, որին կցվում են քվեաթերթիկները:
- 8.14.5. Հեռակա կարգով անցկացված Ժողովի նիստի արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին էլեկտրոնային կամ ֆաքսի միջոցով ուղարկվում է Կազմակերպության քվեաթերթիկները սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով լրացրած և ուղարկված անդամներին ստորագրության:
- 8.15. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
- 1) Կազմակերպության կանոնադրությունում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը,
 - 2) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

- 3) Կազմակերպության Խորհրդի անդամների ընտրությունը, դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - 4) կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,
 - 5) կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից,
 - 6) այլ իրավաբանական անձի ստեղծումը, այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշումների ընդունումը,
 - 7) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
 - 8) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
 - 9) Կազմակերպության Նախագահի ընտրությունը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - 10) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
 - 11) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորին) ընտրությունը, եթե «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
 - 12) Կազմակերպության ռազմավարության հաստատումը,
 - 13) Նախագահի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը, Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջների և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը, Խորհրդի կանոնակարգի, աշխատանքային պլանների ձևավորումը և Խորհրդի գործունեության վերահսկման կարգի սահմանումը:
- 8.16. Կազմակերպության Խորհրդի անդամների ընտրության համար թեկնածություններն առաջադրվում են Կազմակերպության անդամների ներկայացմամբ՝ Ժողովից առնվազն 7 օր առաջ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով նախագահին:
- 8.17. Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով և կազմված է առնվազն 3 անդամից: Խորհրդի անդամների ընտրության կարգը սահմանվում է Խորհրդի կողմից:
- 8.18. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստը հրավիրվում է Խորհրդի Նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, Կազմակերպության անդամների 20%-ի կամ Խորհրդի երկու անդամների պահանջով:
- 8.19. Խորհրդի նախագահը պարտավոր է խորհրդի նիստ գումարել պատշաճ ձևով ձևակերպված պահանջի ներկայացման ամսաթվից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
- 8.20. Խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է էլեկտրոնային փոստային հասցեով կամ հեռախոսակապի միջոցով:
- 8.21. Նիստի մասին ծանուցումը պետք է պարունակի՝
- Կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը (գրավոր ծանուցման դեպքում).
 - Նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - Նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.

- Նիստի անցկացման ձևը.
 - Նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին խորհրդի անդամների ծանոթանալու կարգը:
- 8.22. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ Խորհրդի նիստի մասնակիցները միմյանց հետ հաղորդակցվում են հեռախոսային կապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ռեժիմով: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
- 8.23. Խորհրդի նիստն անցկացվում է իրական ժամանակի ռեժիմում միայն այն դեպքում, եթե խորհրդի նիստի անցկացման տեղում ներկա գտնվող և ներկա չգտնվող խորհրդի անդամները ունեն միմյանց հետ իրական ժամանակի ռեժիմում հաղորդակցվելու հնարավորություն:
- 8.24. Խորհրդի նիստերն իրական ժամանակի ռեժիմում անցկացվում են հետևյալ կարգով.
- 8.24.1. Նախագահը համապատասխան կապի միջոցով կապ է հաստատում նիստի անցկացման տեղում չգտնվող Խորհրդի նիստի մասնակցի (մասնակիցների) հետ, վերջինիս (վերջիններիս) առաջադրելով ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր (իրենց) դիրքորոշումը:
- 8.24.2. Խորհրդի նիստի քարտուղարն արձանագրում է արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները), որը (որոնք) ֆաքսի կամ էլեկտրոնային կապի միջոցով ստորագրության է (են) ներկայացվում Խորհրդի նիստի անցկացման տեղում չգտնվող դիրքորոշում հայտնած Խորհրդի անդամին (անդամներին): Ֆաքսի կամ էլեկտրոնային կապի միջոցով ստացված գրավոր դիրքորոշումը (դիրքորոշումները) Խորհրդի անդամը (անդամները) ստորագրում և համապատասխան կապի միջոցով հետ է (են) ուղարկում Խորհրդի նիստի քարտուղարին: Կապի միջոցով արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները) կարող է (են) ձայնագրվել: Խորհրդի նիստի անցկացման տեղում չգտնվող անդամի (անդամների) կապի միջոցով արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները) հաշվի է (են) առնվում քվեարկության և ձայների հաշվառման ժամանակ, դրանք արտացոլվում են Խորհրդի նիստի արձանագրության մեջ:
- 8.25. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: Խորհրդի նիստերը հեռակա կարգով գումարումն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով Խորհրդի նիստ գումարվում և անցկացվում է հետևյալ կարգով.
- 8.25.1. Խորհրդի քարտուղարը խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսի միջոցով ուղարկում է խորհրդի օրակարգը, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից հաստատված քվեաթերթիկները հետևյալ վավերապայմաններով.
- Կազմակերպության անվանումը,
 - Նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը,
 - Քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,
 - Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակը՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»,
 - Քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:
- 8.25.2. Խորհրդի անդամները ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով խորհրդի օրակարգին՝ քվեաթերթիկների միջոցով քվեարկում են օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ և էլեկտրոնային եղանակով կամ այլ միջոցով այն ուղարկում խորհրդի նիստի քարտուղարին:
- 8.25.3. Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե քվեաթերթիկում թողնվել է քվեարկության մեկ տարբերակ և ուղարկվել քվեաթերթիկում նշված ժամկետում:

- 8.25.4. Խորհրդի նիստի քարտուղարն ամփոփում է Խորհրդի անդամներից ստացված քվեաթերթիկները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է Խորհրդի հեռակա կարգով անցկացրած նիստի արձանագրություն, որին կցվում են քվեաթերթիկները:
- 8.25.5. Հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին էլեկտրոնային կամ ֆաքսի միջոցով ուղարկվում է Խորհրդի անդամների ստորագրության:
- 8.26. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին: Խորհրդի նիստերում որոշումները ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:
- 8.27. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայների փոխանցումը Խորհրդի անդամից մյուսին արգելվում է:
- 8.28. Խորհրդի ցանկացած նիստ կարող է հետաձգվել Խորհրդի նիստին ներկա անդամների համաձայնությամբ:
- 8.29. Խորհուրդը իրավունք ունի նիստին մասնակցելու համար հրավիրել երրորդ անձանց:
- 8.30. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները կազմվում են նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:
- 8.31. Արձանագրությունում նշվում են.
- o նիստի գումարան տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 - o նիստին ներկա անձինք,
 - o նիստի օրակարգը,
 - o քվեարկության դրված հարցերը և դրանց քվեարկության արդյունքները,
 - o ընդունված որոշումները:
- 8.32. Արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները:
- 8.33. Խորհրդի նիստերի արձանագրությունները պահպանվում են Կազմակերպության գտնվելու վայրում:
- 8.34. Խորհուրդը՝
- 1) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,
 - 2) առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
 - 3) ընդունում է Կազմակերպության անդամ և անդամության թեկնածու և հեռացնում է վերջիններիս անդամությունից կամ անդամության թեկնածությունից,
 - 4) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ,
 - 5) ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,
 - 6) սահմանում է Կազմակերպության հանձնախմբերի կազմը և գործունեության կարգը,
 - 7) ընդունում է որոշումներ Կազմակերպության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
 - 8) իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվողներից:

8.35. Խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են սեփական դիմումի հիման վրա, ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ կամ Կազմակերպության Ժողովի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում, ինչպես նաև Խորհրդի նիստերին 1 տարվա ընթացքում առնվազն 3 անգամ անհարգելի՝ առանց պատշաճ ձևով նախօրոք տեղյակ պահելու բացակայելու դեպքում:

8.36. Խորհրդի Նախագահի հանդիսանում է կազմակերպության Նախագահը, ով ընտրվում է Ժողովի կողմից 5 տարի ժամկետով: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում վերջինիս պարտականությունները կատարում է տարիքով ավագ անդամը:


8.37. Խորհրդի Նախագահը.

- 1) ղեկավարում է Խորհրդի գործունեությունը, համակարգում է Խորհրդի հանձնախմբերի աշխատանքները,
- 2) նախաձեռնում է Խորհրդի կանոնակարգի ձևավորումը և վերահսկում դրա իրագործումը,
- 3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս շահառուների, ՁԼՄ-երի, պետական մարմինների, հասարակական կառույցների և այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,
- 4) իրականացնում է Խորհրդի նախագահողի գործառույթները, այդ թվում՝
ա. պաշտոնապես ֆիքսում է նիստի քվորումը կամ դրա բացակայությունը,
բ. պաշտոնապես բացում է նիստը կամ Խորհրդի ներկա անդամներին հայտնում նիստի քվորումի բացակայության մասին և միջոցներ է ձեռնարկում տվյալ օրակարգով նիստը տեղափոխելու և բացակայողներին տեղեկացնելու ուղղությամբ,
գ. կազմակերպում է օրակարգային հարցերի քննարկումը և քվեարկությունը,
- 5) վերահսկում է Խորհրդի պաշտոնական գրագրությունները, Խորհրդի անունից ստորագրում է նամակներ և այլ փաստաթղթեր,
- 6) իրականացնում է Խորհրդի կողմից վերապահված և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 7) Կազմակերպության նպատակների իրականացման համար Կազմակերպությունում կարող են ստեղծվել կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող հանձնախմբեր: Կազմակերպության հանձնախմբերի աշխատանքները ղեկավարում են Խորհրդի անդամները: Հանձնախմբերի կազմը և գործունեության կարգը սահմանվում է Խորհրդի կողմից:

8.38. Կազմակերպության Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից:

8.39. Կազմակերպության Նախագահը.

- 1) իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը,
- 2) ապահովում է Ժողովի, Խորհրդի որոշումների կատարումը.
- 3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 4) տալիս է լիազորագրեր,
- 5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]